կայ «պոռն պատնդ լիքը»[1]։ «Ուսկա կուզաս»»[2] և Պօլսում «ուսէ» փոխանակ ուսոր, «Հերիք չէ՞, որ գաղտուկ երթաս գաս»[3], այսինքն գաղտուկ, գաղտնի։ Եւ մեր Զոլանց տան վէպի Ցռան—Վերջօ—Վերջօն երկու փոփոխակում դարձել է Վերջօ—Վերջօն (№ 16 և 13)։ Ուստի մեզ թուում է, քանի որ Ֆոնտայ անունով մի որ և է հայ իշխան յայտնի չէ, պէտք է Ֆոնտայ Բուեք դեր լինի խաչակրութեան մասնակցող Ֆրէնկ Բոդուէնների մինը և թերևս Բուվէնի դիւցազն Ֆիլիպ Բ. Օգիւստ Ֆրանսիոյ թագաւորը, որ առանդագին մասնակցել է երրորդ խաչակրութեան։

Այժմ, կարծում եմ, կարելի է ասել, թէ ով պիտի լինի այն Օհան Աղբակեցին, որին, Դաւիթը մի աւերակ վանք նորոգելով, նշանակում է պահապան վերակացու (№ 3, Գ. էջ 32—33 ծանոթութիւն)։ Անկասկած այստեղ խօսքը Հաղբատ կամ Աղբակ վանքի մասին է, որ շփոթուել է Վասպուրականի Աղբակ գաւառի անուան հետ. երևի բացի անուան նմանութիւնից և այն պատճառով, որ երկուսն էլ նշանաւոր են վանքերով։ Մենք արդէն ցոյց ենք տուել, թէ ինչպէս Զոլանց տան վէպը Դաւիթ Անհողին իւր Դաւիթն է համարել. իսկ Դաւիթ Անհողինը իշխում էր Լոռիին, որտեղ են նշանաւոր Հաղբատ ու Սանահին վանքերը, իրար շատ մօտիկ։ Արդ այս վանքերը ծաղկել են ԺԱ—ԺԳ. դարերում. վարդապետների սպանութեան դէպքը, մեր վէպի նման, պատմւում է և այժմ, թէև, եթէ չեմ սխալւում, Սանահնում։ Եւ Լանկթամուրի արշաւանքին դէպի Հաղբատ, պատմում էին ինձ տեղացիները, եկեղեցին աւերել են, վարդապետներին տանջել և այլն։ Այս երկու պատմուածքներն ստուգւում են Ամիր Սպասալար Մխարգրձելու արձանագրութեամբ[4]. Հաղբատը հռչակաւոր է և իւր հրաշագործ Սուրբ Նշանով, որ համարւում է Վարագայ Ս. խաչի մասը[5]։ Վերջապէս բացի այն որ այստեղ է թաղուած նշանաւոր Ցովհաննէս սարկաւագ վարդապետը († 1109), որ Հաղբատայ առաջնորդ է եղել. յիշւում են ԺԲ—ԺԳ դարը Ցովհաննէս անունով չորս առաջնորդ կամ վանահայր, առաջին երեքը յաջորդաբար[6] և շի-

1. Ս. Նաւասարդեանց, Հայ ժողովրդական հեքիաթներ Գ. գիրք. էջ 29. Թիֆլիզ 1884. եւ Ե. գիրք, էջ 44. Տփխիս 1889։

2. Էմինեան Աեգաղր. ժող. Բ. § 5. էջ 153. Զարսանձակի բարբառ։

3. Անդ. § 22. էջ 524. Բաղէշի բարբառ։

4. Թոստում բէգ Երզնկեանց, Հնախօսական Տեղագր. Հաղբատայ աշխարհանշակ վանից Սրբոյ Նշանի. Արտատպ. Արարատ Ամսագրից. Բ. էջ 9. Վաղարշապատ 1886։

5. Անդ. ԺԸ—ԺԹ. էջ 76—83։

6. Անդ. Ի. էջ 86—87։ Հմմտ. Կիր. Դանձակեցի. էջ 56. Վենետիկ 1865։